ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 30.11.2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/240

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 06.11.2020թ. թիվ 26/26-1/16735-2020 գրությամբ Ա/Ձ Արտուշ Խաչատրյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 04.11.2020թ. թիվ ԱԹ/6585-2020 գրության հիման վրա 06.11.2020թ. թիվ 26/26-1/16735-2020 գրությամբ նախաձեռնել է Ա/Ձ Արտուշ Խաչատրյանին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Ա/Ձ Արտուշ Խաչատրյանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Ա/Ձ Արտուշ Խաչատրյանի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Ա/Ձ Արտուշ Խաչատրյանը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/240 ընթացակարգի շրջանակներում 20.11.2020թ. ժամը 10:15-ին և 30.11.2020թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 04.11.2020թ. թիվ ԱԹ/6585-2020 գրությամբ հայտնել է, որ Ա/Ձ Արտուշ Խաչատրյանի և Կադաստրի կոմիտեի միջև 2019 թվականի դեկտեմբերի 16-ին կնքված պետության կարիքների համար ըմպելու ջրի մատակարարման պետական գնման թիվ ԿԿ-ԳՀԱՊՁԲ-20/03-1 պայմանագրով (հետայսու նաև՝ Պայմանագիր) ստանձնած պարտավորությունները Ա/Ձ Արտուշ Խաչատրյանի կողմից չեն կատարվել, որի արդյունքում էականորեն խախտվել են Պայմանագրով նախատեսված դրույթները:

Պատվիրատուն հայտնել է, որ հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջներով՝ Պատվիրատուն միակողմանի լուծում է Պայմանագիրը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/240 ընթացակարգի շրջանակներում 20.11.2020թ. ժամը 10:15-ին և 30.11.2020թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/240 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/240 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի և Ա/Ձ Արտուշ Խաչատրյանի միջև 16.12.2019թ. կնքվել է «ԿԿ-ԳՀԱՊՁԲ-20/03-1» ծածկագրով ըմպելու ջրի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Ա/Ձ Արտուշ Խաչատրյանը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեին մատակարարել պայմանագրի N 1

հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրին կից Հավելված 1-ի՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ 47 500 լիտր ըմպելու ջուր «Ակվարինա» ապրանքատեսակի մատակարարումը պետք է իրականացվի կողմերի միջև կնքված պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հետո ըստ պատվիրատուի պահանջի (պատվիրատու հայտով տրված քանակով)՝ շաբաթական կտրվածքով:

3. Պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 29.01.2020թ. կնքվել է 16.12.2019թ. կնքված թիվ «ԿԿ-ԳՀԱՊՁԲ-20/03-1» ըմպելու ջրի ձեռքբերման պայմանագրի վճարման ժամանակացույցը հաստատելու մասին Համաձայնագիր N 1-ը:

4. Ա/Ձ Արտուշ Խաչատրյանին ուղղված 03.11.2020թ. ծանուցմամբ՝ ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեն հայտնել է, որ ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի և Ա/Ձ Արտուշ Խաչատրյանի միջև 16.12.2019թ. կնքված թիվ «ԿԿ-ԳՀԱՊՁԲ-20/03-1» պայմանագրով ստանձնած պարտավորությունները վերջինիս կողմից պատշաճ կերպով չեն կատարվել և էականորեն խախտվել են:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն հայտնել է, որ ղեկավարվելով պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետով՝ լուծում է վերոհիշյալ պայմանագիրը:

5.Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում 03.11.2020թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 06.11.2020թ. թիվ 26/26-1/16735-2020 գրությունը, ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի 04.11.2020թ. թիվ ԱԹ/6585-2020 գրությունը և կից փաստաթղթերը, գործում առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել

գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպիսով՝ ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի և Ա/Ձ Արտուշ Խաչատրյանի միջև 16.12.2019թ. կնքվել է «ԿԿ-ԳՀԱՊՁԲ-20/03-1» ծածկագրով ըմպելու ջրի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Ա/Ձ Արտուշ Խաչատրյանը

պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրին կից Հավելված 1-ի՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ 47 500 լիտր ըմպելու ջուր «Ակվարինա» ապրանքատեսակի մատակարարումը պետք է իրականացվի կողմերի միջև կնքված պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հետո ըստ պատվիրատուի պահանջի (պատվիրատու հայտով տրված քանակով)՝ շաբաթական կտրվածքով:

Պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 29.01.2020թ. կնքվել է 16.12.2019թ. կնքված թիվ «ԿԿ-ԳՀԱՊՁԲ-20/03-1» ըմպելու ջրի ձեռքբերման պայմանագրի վճարման ժամանակացույցը հաստատելու մասին Համաձայնագիր N 1-ը:

Ա/Ձ Արտուշ Խաչատրյանին ուղղված 03.11.2020թ. ծանուցմամբ ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեն հայտնել է, որ ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի և Ա/Ձ Արտուշ Խաչատրյանի միջև 16.12.2019թ. կնքված թիվ «ԿԿ-ԳՀԱՊՁԲ-20/03-1» պայմանագրով ստանձնած պարտավորությունները վերջինիս կողմից պատշաճ կերպով չեն կատարվել և էականորեն խախտվել են:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պատվիրատուն հայտնել է, որ ղեկավարվելով պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետով՝ լուծում է վերոհիշյալ պայմանագիրը:

Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում 03.11.2020թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:***

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ ***Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.***

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) Մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

Արձանագրում եմ, որ Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետը, այն է՝ ***ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի, 03.11.2020թ. միակողմանի լուծել է Պայմանագիրը:***

Այսպիսով՝ այս տեսանկյունից հարկ եմ համարում արձանագրել հետևյալը.

Պայմանագրի 2.4 կետի 2.4.1 ենթակետի համաձայն՝ ***Վաճառողը պարտավորվում է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված*** կարգով, ծավալներով, ***ժամկետներում*** և հասցեով:

Պայմանագրին կից Հավելված 1-ի՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ***47 500 լիտր ըմպելու ջուր «Ակվարինա» ապրանքատեսակի մատակարարումը պետք է իրականացվի կողմերի միջև կնքված պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հետո ըստ պատվիրատուի պահանջի (պատվիրատուի հայտով տրված քանակով)՝ շաբաթական կտրվածքով:***

Այսպիսով՝ վերոգրյալ նորմերի բովանդակությունից հետևում է, որ Պատվիրատուն իրավունք ունի լուծել Պայմանագիրը, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի, միաժամանակ Վաճառողը պարտավորվում է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում, ընդ որում՝ Պայմանագրով ապրանքի մատակարարման ժամկետ է նախատեսվել ըստ պատվիրատուի պահանջի (պատվիրատու հայտով տրված քանակով)՝ շաբաթական կտրվածքով, մինչդեռ՝ Պատվիրատուի կողմից տրամադրված փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ առկա չէ Պատվիրատուի կողմից Ա/Ձ Արտուշ Խաչատրյանին տրված ըմպելու ջուր «Ակվարինա» ապրանքատեսակի մատակարարման պահանջ՝ պատվիրատուի հայտով տրված քանակով՝ շաբաթական կտրվածքով, որպիսի պայմաններում հնարավոր կլիներ արձանագրել Ա/Ձ Արտուշ Խաչատրյանի կողմից Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի խախտման փաստը, այն է՝ ապրանքի մատակարարման ժամկետների 5 օրից ավելի խախտման փաստը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է***

<u>պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>

Վերը նշված փաստերով պայմանավորված՝ գտնում եմ, որ Ա/Ձ Արտուշ Խաչատրյանի վարքագիծը չի կարող գնահատվել որպես «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, քանի որ վերջինս օբյեկտիվորեն զրկված է եղել Պայմանագրով ստանձնած պարտականությունները Պայմանագրով սահմանված ժամկետներում կատարելուց, ուստի պայմանագրային պարավորությունների չկատարումը տվյալ պայմաններում պայմանավորված է եղել Ա/Ձ Արտուշ Խաչատրյանի կամքից և վարքագծից անկախ հանգամանքներով, հետևաբար այն չի կարող հանգեցնել Ա/Ձ Արտուշ Խաչատրյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Միաժամանակ, ուսումնասիրելով գործի շրջանակներում Պատվիրատուի կողմից որպես պահանջի ներկայացման հիմնավորում տրամադրված լրացուցիչ փաստաթղթերը, այն է՝ 12.12.2019թ. և 24.01.2020թ. Պատվիրատուի էլեկտրոնային հասցեից՝ <u>gnumner@cadastre.am</u>, Ա/Ձ Արտուշ Խաչատրյանի էլեկտրոնային հասցեին՝ <u>varduhi.israyelyan.1988@mail.ru</u>, ուղարկված ծանուցումները, որոնցով ըստ Պատվիրատուի փաստվում է Պատվիրատուի կողմից ապրանքի մատակարարման պահանջը, արձանագրում եմ, որ ուղարկված ծանուցումներում ընդամենը նշվում է, որ Ա/Ձ Արտուշ Խաչատրյանը Պատվիրատուի հետ կապ հաստատի, այլապես պայմանագիրը կլուծվի, գտնում եմ, որ նման ծանուցումները չեն կարող համարվել ապրանքի մատակարարման պահանջ, քանի որ համաձայն Պայմանագրի՝ ըմպելու ջուր «Ակվարինա» ապրանքատեսակի մատակարարումը պետք է իրականացվի կողմերի միջև կնքված պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հետո ըստ պատվիրատուի պահանջի՝ պատվիրատուի հայտով տրված քանակով՝ շաբաթական կտրվածքով, մինչդեռ արձանագրում եմ, որ ծանուցումներում ապրանքի մատակարարման և առհասարակ քանակների վերաբերյալ որևէ պահանջ նշված չէ:

Միաժամանակ հարկ եմ համարում արձանագրել, որ.

Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանվում է, որ ***մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ <u>պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում</u>:***

Պայմանագրի 3-րդ կետի 3.2 ենթակետով սահմանվում է, որ դրամական միջոցների փոխանցումը իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ ***համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կնքվելիք լրացուցիչ համաձայնագրի վճարման ժամանակացույցով*** նախատեսված չափերով և ամիսներով:

Պայմանագրի շրջանակներում կողմերի միջև ***29.01.2020թ.*** կնքվել է 16.12.2019թ. կնքված թիվ «ԿԿ-ԳՀԱՊՁԲ-20/03-1» ըմպելու ջրի ձեռքբերման պայմանագրի վճարման ժամանակացույցը հաստատելու մասին Համաձայնագիր N 1-ը:

Վերը նշված կարգավորումները ցույց են տալիս, որ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը օրենքով սահմանված կարգով կնքված պայմանագրի շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, այսինքն՝ ստացվում է, որ Պատվիրատուն սույն Պայմանագրի շրջանակներում իրավասու չէր 29.01.2020թ.-ից շուտ Ա/Ձ Արտուշ Խաչատրյանին ներկայացնելու Պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման պահանջ, քանի որ սույն գնման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները, համաձայն կողմերի միջև կնքված N 1 Համաձայնագրի, նախատեսվել են 29.01.2020թ.-ին:

Ուստի նման պայմաններում Պատվիրատուի այն պնդումները, որ այնուամենայնիվ Պատվիրատուի կողմից համապատասխան էլեկտրոնային ծանուցումների միջոցով 12.12.2019թ. և 24.01.2020թ. պահանջ է ներկայացվել Ա/Ձ Արտուշ Խաչատրյանին Պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման համար, չեն կարող լինել իրավաչափ՝ դեռևս այդ գնման համար ֆինանսական միջոց նախատեսված չլինելու պայմաններում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 06.11.2020թ. թիվ 26/26-1/16735-2020 գրությամբ Ա/Ձ Արտուշ Խաչատրյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**